



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, grisha.balasanjan@hetq.am, URL : www.hetq.am

14.12.2020թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Պարոն Արարատ Գրիգորյանին
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. +37493-82-26-80

Հարգելի պարոն Գրիգորյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի հետևանքով Վայոց ձորի մարզում քանի՞ արցախցի է ժամանակավոր բնակվում: **Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների:**

2. Արցախի ո՞ր համայնքներից են Վայոց ձորի մարզ տեղափոխվել արցախցիները: **Տեղեկատվությունը տրամադրել ըստ Արցախի համայնքների, որտեղից եկել են՝ նշելով նաև այդ համայնքներից տեղահանվածների թիվը:**

3. Ի՞նչ բնակելի հատվածներում, կացարաններում կամ վայրերում են ապրում Վայոց ձորի մարզում գտնվող արցախցիները: **Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով բնակելի տարածքի տեսակը, յուրաքանչյուրում ապրողների թիվը (տուն, դպրոց, մանկապարտեզ և այլն):**

4. Համայնքային ենթակայության տարածքներում ապրող արցախցիների ծախսերը, այդ թվում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլն, ո՞վ է հոգում, ի՞նչ միջոցներից: Ի՞նչ դժվարություններ են առաջանում:

5. Նախկինում չբնակեցված կամ դատարկ տներում ապրող արցախցիների ծախսերը, այդ թվում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլն, ո՞վ է հոգում, ի՞նչ միջոցներից: Ի՞նչ դժվարություններ են առաջանում:

6. Կա՞ն արցախից ժամանակավոր տեղափոխվածներ, ովքեր ցանկություն են հայտնել մշտապես բնակվել մարզի տարածքում: Եթե այո, ապա այդ ուղղությամբ ի՞նչ քայլեր է ձեռնարկել մարզպետարանը, ի՞նչ ծրագրեր կան նման անձանց համար:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան

2. 2. ՎՍՑՈՑ 2020. 12. 14
Մուտքի թիվ 8767
14. 12. 2020